

Գ Ա Յ Յ Ր Ե Ն Ի Ք

20
Փարայ

ՕՐԱԹԵՐԹ

20
Փարայ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հայրենիք ամեն օր կը հրատարակուի, տարեկան գինն է Պոլսոյ Ե. Լրագրոյս վերաբերեալ գիր կամ նամակ պէտք է ուղղել առ Տեր-Խմբագրուին 7 արծար մեծիտ կանխիկ գաւառական բողոքատարութեան ծախքը մեր վրայ է: Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդք ալ կը նկատուին:

Լրագրոյս վերաբերեալ գիր կամ նամակ պէտք է ուղղել առ Տեր-Խմբագրուին 7 արծար մեծիտ կանխիկ գաւառական բողոքատարութեան ուղղեալ գիր եւ չը տրուի: Ծանուցման տողը մէկ անգամի նամար 3 դրուշ է. աւելի անգամի նամար սակարկութիւն կը լայ:

Ն Ե Ր Ք Ի Ն

Մայիս 21 թուով Մէսէնճըրի Զմիւռնիայէն կը հեռագրեն թէ տեղւոյն նորընտիր կուսակալ Ալի փաշա հինգշաբթի երեկոյ Զմիւռնիա հասնելով, ապարանքը իջեր և սովորական ընդունելութիւնը կատարուելէ վերջը զինուորանոցը դաջեր է Միթհատ փաշան տեսնելու համար. քիչ մը վերջը Միթհատ փաշան, կուսակալը բերող Սթամպուլ արքունի շոգենալը տարեր են, ուր ձեռնադրուած փաշայ և միւս պաշտօնեայք իրեն կը սպասէին. առաջին հարցափորձը շոգենալին մէջ կատարուեր է ըստ օսմանեան օրինաց. սակայն հարցափորձին վրայ տեղեկութիւն մը առնուլ անհնար եղեր է. իսկ Մէսէնճըրի իւր փաշա շատ հիւանդ ըլլալուն Կ. Պոլիս չպիտի բերուի եղեր:

— Մէսէնճըր կըսէ թէ կիրակի օր Հելլէնական դաշնագիրը պիտի կնքուեր, սակայն դժբաղդաբար Սէրվէր փաշա յանկարծ պալատը կոչուեցաւ և մինչև երեկոյեան ժամը մէկին Վեհ. Սուլթանին ըզրը մնաց. իսկ դեսպանը և Օսմ. պատուիրակները դաշնագրոյն ինն օրինակները կարգացին, բայց Սէրվէր փաշայի բացակայութեան պատճառաւ չը կրցան ստորագրել: Ուստի դարձեալ որոշեցին սպասել և երեկոյեան ճաշը Աւստրիոյ դեսպանատան մէջ ըրին, իսկ երէկ առաւօտ դեսպանը այս կերպով ժամանակ կորսնցնելուն համար գանդատ յայտնեցին Բ. Դրան և շատ հաւանական է որ այսօր դաշնագիրն ստորագրուի:

— Թահիր, Մուսթաֆա ֆեաղիմ, Մուսա, Հիւսէյն Յէյզի, Ահմէտ, Փաղը փաշաները զօրաբաժնի հրամանատարութեան աստիճան բարձրացան:

— Բաբերդի կուսակալ Իզզէթ փաշա երէկ մայրաքաղաքս եկաւ:

— Եաֆայէն մայիս 12 թուով Մէսէնճըրի հետեւեալը կը զրեն:

«Օրթոտորս ժողովուրդը երկար տարիներէ ի վեր յուզող երուսաղէմի յունական վանուց խնդրը վերջապէս լուծ-

ուիլ կը սկսի: Ամսոյս 21-ին ոստիկանութեան վերատեսուչ Ասիմ պէյ շատ մը ոստիկաններով վանքին դուռը ափառաւ և ներս մտնելով ուղղակի Քաղայի արքեպիսկոպոսին բնակարանը դնաց. արքեպիսկոպոսը Սինօզի պատուիրակն ըլլալով, վանքին մէջ կը բնակի:

«Ոստիկանութեան պաշտօնեան արքեպիսկոպոսին և նորա աւագերէց թարգմանին ծանոյց որ պէտք է վանքէն հեռանան: Երկու կղերականք յանկարծակիի գալով հարցուցին թէ որով իշխանութեամբ զիրենք վանքէն դուրս հանել կուզէ: Հաղարաւ ետը պատասխանեց թէ իրեն հրամայողը փաշան է և թէ Պատրիարքը ու Բ. Դուռը անշուշտ այս հրամանը զրոյշ են. այն ատեն կղերականք 26 ժամ պայմանաժամ ուղեցին իրենց կարասիքը ժողովուրդ համար: Սակայն պաշտօնեայն պատասխանեց թէ պայմանաժամ չորհելու հրաման չունի ինքը, և թէ մերժէ, պարտաւոր է զինքը բռնի վանքէն դուրս հանելու: Ոստիկանները շարուած էին վանքին չորս կողմը և շրջակայ փողոցները և նոյն իսկ վանքին մէջ, կէս գիշերուն տէրութեան կառն հասնելով երկու երէցներն մէջը մտան և Դամասկոսի դռնէն Եաֆա մեկնեցան. վանականք և ժողովուրդէն ոմանք ուղեցին համակրութիւն յայտնել արքեպիսկոպոսին, որ այս կերպ կաքսորուէր, սակայն ոստիկանք արգիլեցին որ և է մէկու մը կառքին մօտենալ:

«Երկար տարիներէ ի վեր այսպիսի դայթակղական դէպք մը պատահած չէր երուսաղէմայ մէջ. այս առաւօտ հաղարապետը երկու ձերբակալեալներով Եաֆա հասաւ շուկային մէջէն անցնելով խեղճերը կարծես թէ ամենամեծ ոճրագործեր էին, վասն զի շատ մը ոստիկաններ պաշարած էին զիրենք և մեծ խայտառակութեամբ ապարանք անկէ ալ աւստրիական Արկո շոգենալը տարին Բօրդ-Սայիտ և ի լեառն Սինա տանելու համար:

«Կ. Պոլսոյ Յունաց Պատրիարքը այս միջոցին հեռագիր զարկաւ Եաֆայի վանքին արքայօր որ երկու եկեղեցականները Սինա լեռը տանելու համար կա-

րելի եղածին չափ ստակ տայ ճամբու ծախք. արքայօրն ալ 1000 ֆրանք տրուաւ: Մեր կառավարիչը մեծ քաղաքավարութեամբ վարուեցաւ երիցանց հետեւուսաղէմայ վանուց միաբաններն ալ բողոքանաց հեռագրեր զարկին Բ. Դուրան և խնդրեցին որ այս խնդրոյն նկատմամբ առ Պատրիարքն միջամտէ, սակայն մինչև ցարդ պատասխան մը չընդունեցան:

«Սոյն կղերականաց արքայօրն ամենագէշ տպաւորութիւն մ'ըրաւ ժողովուրդեան վրայ. վասն զի ասոնց յանցանքը մի միայն վանուց հաշիւը Պատրիարքին տալ չուղեցին էր, Պատրիարքը կը սպառնայ միւս անհնազանդ քահանաներն ալ արքայօրն ալ և մասնաւորապէս Անթիմոս եպիսկոպոսը. միով բանիւ Պատրիարքը կուզէ բացարձակապէս ինքնին կառավարել Երուսաղէմայ վանքը»:

— Թուրքի խնդրոյն վրայ Վիէնայէն թան լրագրին հետեւեալ տողերը կը գրեն:

«Թէև Իտալիոյ մէջ հասարակաց կարծիքը յուզեալ և Անգղիոյ խորհրդարանին մէջ շարունակ հարցապնդումներ տեղի կունենան, սակայն Թուրքի խնդրը վերջացած կը համարին հոս: Գաղղիական զօրաց արշաւանքը մեծ տպաւորութիւն գործեց հոս. վասն զի այսքան արագ յառաջխաղացութիւն մը չէր սպասուեր:

«Վերջին օրերս Բ. Դուռը տեսնելով որ իւր շրջաբերականներն անպատասխանի կը մնան, Պէրլինի և Վիէնայի կառավարութիւններէն խնդրեց որ միջամտեն: Սակայն Վիէնա և Պէրլին պարսպին ստորտը մնալով, բացարձակապէս յայտարարեցին թէ Օսմանեան առաջարկութիւններն հիմ մը չունենալով, իրենք Գաղղիոյ կողմը հակած են: Գաղղիական կառավարութիւնը միւս կողմանէ դիտել տուաւ թէ Բ. Դուռը մինչև ցարդ չուզեց իւր վրայ առնուլ պատասխանատուութիւնը, կամ խօսիլ այն չարեաց և հարստահարութեանց վրայ որոց Գաղղիա Թուրքի մէջ են թարկուած էր:

«Դալով Բ. Դրան դերիխանական ի-

բաւանց, Գաղղիա 1864 ին Օսմանեան արտաքին գործոց նախարարին կողմանէ առ գաղղիական դեսպան Պ. Մուսթիէ զրկուած պաշտօնական գրուածին մը հըրատարակեց, որուն մէջ Բ. Դուռը Ա. Բրիկէի մէջ գաղղիական երկիրներուն թունուղէն բաժնուելուն վրայ խնդուածին կը յայտնէր. թունուղէն որ անկախ երկիր մ'է: Բ. Դուռը կը յաւելուր որ եթէ թունուղը գոյութիւն իսկ չունենար, պէտք էր զայն ստեղծել Գաղղիոյ և Տաճկաստանի շահուց համար:»

— Զմիւռնիոյ Ռէֆորմ լրագրին մէջ հետեւեալը կը կարդանք: Երեք հրէայք իշով Բունար Պաշը կերթային. յանկարծ երկու զինեալ մարդիկ ասոնց դիմացն ելան, որոց ետեւն ուրիշ 6 աւազակներ կուգային. ասոնք առանց բան մը ըսելու հրէայնեքը յափշտակելով մերձակայ լեռները տարին. Հոն մին արձակեցին որպէս զի երթայ քաղաքէն փրկանաց զին բերէ, իսկ միւս երկուքը առաջ տարին, վասն զի հետուէն հովիւ մը զասոնք նշմարած էր: Վերջապէս 36 ժամ շարունակ քալելով Մանիսայի մօտերը յոգնութիւն առնուհամար նստան. աւազակներէն մին գըլուկը հրէահին ծունկը դնելով քնացաւ. միւսներն ալ շարաչար յոգնած ըլլալով հետզհետէ քնացան. երկու հրէայնեքը ուղեցին իրենց տէրերուն թմրութենէն օգուտ քաղելով փախչիլ, և յաջողեցան: Երկրորդ օրը Զմիւռնիա հասան և փութով մարդ զրկեցին իրենց երրորդ ընկերին ետեւէն, որ 500 մէճիտ փրկանք տանելու համար Զմիւռնիայէն ճամբայ ելած էր. յետոյ ոստիկանութեան ծանուցին այս դէպքը. կըսուի թէ աւազակները բռնուած են. սակայն այս մասին ստոյգ տեղեկութիւն չկայ:

Զմիւռնիոյ զինուորական իշխանութիւնը երեքշաբթի օր 100ի չափ զինուոր զրկեց Մանիսա, Մէհմէտ Բիւշտի փաշան ձերբակալելու համար. սակայն փաշային հիւանդութեան պատճառաւ, անկարելի եղաւ սոյն որոշումը գործադրել: Զինուորաց հետ բժիշկ մը կը գըտնուէր:

Զրոյց կը պարտի թէ ոստիկանութեան նախկին տեսուչ Էմին փաշա ոստիկանութեան կողմանէ ձերբակալուել է:

— Աժանս Հավաս մայրաքաղաքէս մայիս 7 թուով Եւրոպական լրագրաց հետեւեալ հեռագիրները կը հաղորդէ.

« Բ. Դուռը որոշեց թունուղի Պէյը պաշտօնանկ ընել, որոհետեւ նա 1871ին ինքզինքը Բ. Դրան հպատակ ճանչելուն հակառակ առանց Բ. Դրան հրամանին Գաղղիոյ ներկայացած դաշնագիրն ստորագրեց:»

— Թէհրանի անգղիական դեսպանատան առաջին քարտուղար Վալթէր Պարինկ իւր ընտանեօք մայրաքաղաքս գալով, ընտանիքը հոս թողուց և ինքը այսօր Թէհրան մեկնեցաւ:

— Յունաստանի ծովային գործոց պաշտօնեայն պաշտօնական ծանուցում մը հրատարակելով օտար նաւուց առանց առաջնորդի Պիրէոնի նաւահանգիստը մտնելը կարգելու, վասն զի զանազան տեղեր ծովառումբ զետեղուած է եղեր:

— Ոստիկանութեան դուռը բանտարկեալ 25 Հելլէն աւազակներ աւստրիական շոգենաւով Յունաստան արտորուեցան:

— Ռոտտոթօէն կը գրեն թէ քաղաքին բանտարանէն 50 աւազակներ փախչիլ ուզեր, սակայն ոստիկանաց կողմանէ արգելուել են: Այս վերջիններէն երկու հոգի վիրաւորուել, իսկ աւազակներէն մին սպաննուել և երկուքը վիրաւորուել են:

— Շքոտրացի երեք հարիւր աղջիկներ հանդանակութիւն ընելով, արծաթեայ գրիչ մը նուիրել են Խաթիրիացի տիկին Տօրայի, որ Ալպանիացի ոսկերիչներէն բանուած ընտիր գործ մ'է:

— Կրետէի մէջ Չայն Կրետէի անունով (Սէտարի-Կիրիտ) տաճկերէն լեզուաւ լրագիր մը սկսել է հրատարակուիլ:

— Ֆար կըսէ թէ նամուզ փաշայի որդին ալ ձերբակալուել է:

ՀՆՈՒՍԳՐԱԼՈՒԻՐՔ

(Աժանս Էնկիւրը)

Լոնտրա 24 մայիս

Լոնտրայի այս առաւօտեան լրագիրք Սալիզբրի մարքիզին, Գորթի կոմսին և Պ. Վատինկթոնի միջև կնքեալ մասնաւոր համաձայնութեան մը վրայ կը խօսին, որ վերջերս երևան հանուել է, և որուն համեմատ՝ երբ թունուղ Ֆրանսայի անցնի, Խալիա ալ Ափրիկեան Տրիպոլիսը պիտի գրաւէ եղեր:

Գիտսի արկածեղաց համար Լոնտրայի Գաղաքագետութեան կողմէ հանգանակեալ գումարը 22,895 Անգղիական ոսկուց կը հասնի, յորմէ 21,964 ոսկին Կ. Պօլիս զրկուեցաւ:

Սէլանիկ 23 մայիս

Պ. Սիւթէր (որ աւազակաց ձեռք իյնալով լեռը տարուած էր) արձակուեցաւ: Փրկանքին գումարը դեռ յայտնի չէ աստ: Այս իրիկան Ալլանիկ կսպասուի:

Նիքոյի հրոսպարար Լոտինայի մօտ հարուստ թուրք Կոնստանտին Մահմուտ աղա Պասանլին բռնուց զոր տարաւ, և 6000 լիւրա փրկանք մը դրահանջէ:

Աթէնք 23 մայիս

Այս իրիկուան Այլօն լրագիրը կը ծանուցանէ թէ այս առաւօտ գումարեալ նախարարական խոհուրդը պայմանագրին տրամադրութիւնները քննեց, որուն նկատմամբ տէրութեանց կողմէ զեկուցում մի կըսպասէ: Այն զեկուցման կառավարութեան կողմէ տրուելիք պատասխանն ալ քննուեցաւ:

Թագաւորն երեք յաւելական հետեւակագունդերու կազմութեան հրամանագիրն ստորագրեց, որով Յունաստանի հետեւակազօրաց գումարն 37 դունդի կը հասնի:

Լոնտրայի Հելլենական դեսպան Պ. Գոնտոթալլոս հրաժարական տուաւ, որ ընդունուեցաւ Պ. Գումուստուրոսէն, Յաջորդը դեռ յայտնի չէ:

Ընդդիմադիր կուսակցութեան լրագիրք միաձայն կը ստիպեն կառավարութիւնն որպէս զի գումարէ երեսփոխանաց ժողովն:

Լոնտրա 23 մայիս

Անգղիոյ թագուհին արքայազուն Լէոբոլտ իշխանն Ալպանիի դուքս անուանեց: Իրլանտիոյ ազարակային միութեան քարտուղար Պ. Պրէնան երէկ ձերբակալեցաւ ժողովուրդը բռնութեան զրգըւելու ամբաստանութեամբ:

(Աժանս Հավաս)

Թունուղ 23 մայիս

Պէյը արտաքին գործոց պաշտօնատան առաջին տնօրէն Մօհամէտ Պաքուշ զօրավարը պաշտօնէ դադարեցուց հանգստեան թոշակ մը սահմանելով:

Պէյին և գաղղիական դեսպան Պ. Բուսթանի միջև յարաբերութիւնը շատ աղէկ են:

Լոնտրա 23 մայիս

Ս. Փէթրսպուրկէն Տէյլի Թէլէկրաֆի կը հեռագրեն թէ Չարը Մոսկուայի քաղաքացետ Պ. Քաթրօֆի խոստացեր է իւր աթոռը Մոսկուա փոխադրել:

Պիզերթա 23 մայիս

Խրումիր ցեղերէն բազմաթիւ անձինք Պէթա գացին հպատակութիւն յայտնելու համար:

Աթէնք 23 մայիս

Տէրութեանց դեսպաններն այսօր գաղղիական դեսպան Մուրի կոմսին ապարանքը գումարեցան:

Փարիզ 23 մայիս

Երեսփոխանաց ժողովը Ֆրանքօ-Թունուղի դաշնագիրն ընդունեց միաձայնութեամբ, միայն մի ձայնի բացառութեամբ:

Պէրլին 23 մայիս

Աւստրիոյ և Կերմանիոյ միջև առևտրական դաշնագիրն այսօր ստորագրեցաւ:

Փեթրոպուրկ 23 մայիս

Ալեքսանտրովսքի և Մէլիթօլի շքըջանակաց մէջ խուովութիւնը կը շարունակեն: զիւղացիք կը հարուածեն կառուածատէրերն և Հրէայ վարձակալները: — Մայիս 9ին Բիէֆի մէջ տեղի ունեցած անկարգութեանց վրասը մէկ միլիոն ռուպլիէ աւելի է:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Բարերգէն Ազգ. Պատրիարքարան գրուած գիր մը կը ծանուցանէ թէ տեղւոյն Առաջնորդական Տեղ. Գեր. Տիմոթէոս վարդապետ Հանէսեան Բարերգի մէջ Սահմանագրութիւնը գործադրելով, գաւառական Ընդհանուր և Քաղաքական ժողովները կազմելու, դիւաններն ընտրելու և ընտրութեան տեղեկագրերը Պատրիարքարան ղրկելու վաւերացուելու համար:

Դարձեալ Բարերգէն գրուած նամակ մը կը յայտնէ թէ Բլուր դիւղի առևանգեալ աղջկան խնդրոյն համար Ազգ. Պատրիարքարանէն առ Բ. Դուռն ուղղեալ թագրիքին և Կարնոյ ընդհանուր դատախազին զրկուած գրեւորն հակառակ գործադրութիւն մը չէ եղած ցարդ և ոճրագործութեան հեղինակներէն և ոչ մին տակաւին պատժուած չէ. իսկ Բլուր դիւղի Պէյը կառավարութեան ժո-

ղովին մէջ իւր պաշտօնը կը շարունակէ : Սոյն նամակը կը յաւելու թէ Բաբերդի Գրիստոնեայք և Մահմետականք սակաւիկ ինչ սկսեր են իրարու սէր ցուցնել, ինչպէս Չատիկ տօնին առթիւ պատուաւոր տաճիկներ քրիստոնէից այցելութիւններ ըրեր են :

* * * Բաբերդէն գրուած երրորդ նամակ մ'ալ տեղեկութիւն կուտայ թէ Բաբերդի ազգայինք 30 ոսկի հանգանակելով սովորոց Յանձնաժողովին զրկեր են : Բաբերդի մէջ 900-1000 հայոց տուն կը գտնուի . սակայն հազիւ 100 ը քիչ շատ կարողութիւն ունի ապրելու, իսկ մնացեալը աղքատ են :

... Տէր Հռովմայ Սրբազան Պապին կողմէն շնորհուած պատուազարմը ընդունողն հանդուցեալ հօրս հանդուցեալ եղբորորդին՝ չքնաղազիւտ զորդուց վաճառական մեծապատիւ Սերովբէ Էֆէնտի Ազնաւորեանն լինելով և ոչ ստորագրեալ, կը խնդրեմ որ շնորհ ընէք ի լոյս ընծայել զայս, յուղղութիւն երկրայութեան որուն տեղի տուած են լրագրաց հրատարակումներն :

Ընդունեցէք յարգանացս յայտարարութիւնը հանդերձ կանխիկ շնորհակալեօքս : Ս. Ա. Ն. 12 մայիս 1884 փաստարան

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Հելլենական խնդրոյն դաշնագիրը դեռսպանք և Օսմանեան պատուիրակները ստորագրեցին, Ահաւասիկ դաշնագրոյն զխաւոր պայմանները :

Երրորդ յօդուածով մահմետականաց կրօնքը, կենաց և ընչից ապահովութիւնը պաշտպանուած է :

Չորրորդ յօդուածը մահմետականաց կայուածները կապահովէ :

Հինգերորդ յօդուածը տէրութեան կալուածներուն վրայ Բ. Գրան ունեցած իրաւունքը կը ճանչէ :

Ութերորդ յօդուածը կրօնից ազատութիւն կը տրամադրէ :

Իններորդ յօդուածը Օսմանեան և Հելլեն պատուիրակներէ կազմեալ խառն մասնաժողով մը կը տրամադրէ, որ Յունաստանի թողուած հողերուն մէջ մնալով երկու տարի, ժողովուրդեան բողոքները և դանդաղանքը պիտի քննէ :

Ահրորդ յօդուածը տասնորդական տրրոց մնացածը դանձելու համար յանձնաժողով մը կազմել կը տրամադրէ :

Ահրորդ յօդուածը երկիրները պարպելու կը վերաբերի, և կը տրամադրէ որ համազգային յանձնաժողով մը երկիրներուն յանձմանը հսկէ և մինչև 15 դեկտեմբեր յանձման գործը լմննայ :

Տրիպոլոյ նկատմամբ այսօր հասած հեռագիր մը տաճկական մամուլին զայրոյթը գրգռած է : Վազըթ և Հազըթաթ կըսեն թէ տէրութեանց մէջ կնքուած դաշնագրերը ոչինչ են, իրաւունքը զօրաւորին է : Գաղղիա հակառակ իւր խոստման թունուզի պէյի այնպի-

սի դաշնագիր մը ստորագրել տուաւ որ թունուզը շրաւելէ տարբերութիւն մը չունի . միւս տէրութիւնը փոխանակ ըստ շրջուր Գաղղիոյ դէմ, զայն սրբագործեցին իրենց լուծեամբը և հաւանութեամբը : Հիմայ ալ երեք տէրութեանց արտաքին դործոց նախարարները կը բանակցին զաշնագրերը նորէն վեր ի վայր շրջելու համար : այսպիսի ճանր պարագայից մէջ, կը յաւելուն թուրք լրագիրք, մեր պարտքն է թունուզի վրայ ունեցած գերիշխանական իրաւունքնիս պաշտպանելով հանդերձ 50 կամ 40 հազար զօրաց բանակ մը զրկել ի Տրիպոլիս, և տեղական իշխանութիւնը զօրացնել : արդէն Տրիպոլոյ կուսակալութեան երկիրները արգաւանդահող և բերրի ըլլալով, բանակին ծախքը կը հանեն : Հազըթաթ խորհուրդը կուտայ թունուզ զըրկուելիք նաւատորմը Տրիպոլիս զրկել, յուսալով թէ ոչ ոք կրնայ այս ձեռնարկութեան դէմ դնել :

Վազըթ թունուզի խնդրոյն նկատմամբ Պիզմարք իշխանին մի նոր յայտարարութիւնը յառաջ կը բերէ :

Պիզմարք իշխանը դեսպանաց ծանուցեր է որ թէ և Գաղղիա թունուզի պէյը բացարձակ և անկախ իշխան մը ճանչելու իրաւունք ունի, սակայն թունուզի պէյը Օսմանեան վեհապետին 71 հրամանագիրն ընդունած ըլլալուն համար, այս վերջնոյն գերիշխանական իրաւունքը չկրնար ուրացուիլ :

Գարատաղի արևելեան և Տուլչի-նոյի կողմանց սահմանները ճշդելու պաշտօն ունեցող յանձնաժողովին անդամները երէկ մայրաքաղաքս հասան : Ռուսիոյ դեսպանը Տուլչի-նոյի կողմէն Գարատաղի սահմաններուն ընդարձակութիւնը միտ կը պնդէ եղեր :

Արևելեան թունուզի կուսակալ Ալէքս փաշա պարտիպէն կը մեկնի մայրաքաղաքս դուրս համար, որ վեհ. Սուլթանէն արտաքին թիւն խնդրելով երկու ամսոյ համար նորոպա պիտի ճանապարհորդէ :

Անդղիոյ դեսպանը և դեսպանատան պաշտօնեայք երէկ վեհ. Սուլթանին պալատը ճաշի հրաւիրուեցան :

Քուրիէ կըսէ թէ Հռովմի նախորդ դեսպան թիւրքան պէյ Չմիւնիայէն Պօլիս կանչուեցաւ, Ալլանիայի հայրենակիցներէն միոյն գրած նամակի մը վրայ բացատրութիւն տալու համար :

Ասիոյ կուսակալներէն մին ալ ալպանիական խնդրոյն համար Պօլիս կոչուած է :

Քուրիէ հանդուցեալ Սուլթան Ապտ-իւլ-Աղիզի սպանութեան վրայ յօդուած մը կը գրէ որմէ հետեւեալ կարեւոր տողերը կը քաղեմք :

« Գառատաղի պիտի յայտնէ թէ այս եղերերգութեան բոլոր կուսակցութիւնները ինչպէս միացեր են իրարու հետ պիտի հասկցուի թէ Սուլթան Աղիզի գահընկէցութիւնը ինչո՞ւ համար խորհրէր են, և թէ ինչո՞ւ համար փոխանակ չորեքշաբթի ցերեկ կատարելու երկուշաբթիէն երեքշաբթի լուսնալու գիշերը կատարեր են : Ինչ տեսակ դէպքեր

Սուլթան Մուրատի խելոյն մնաս տուեր են, և ինչո՞ւ համար Սուլթան Աղիզի կենդանութեան անոր յաջորդը չը կարգելով, զայն սպաննել որոշեր են :

« Ահա այս ամեն պարագայները և հաւոր գաղտնիքները դատաստանը միայն կրնայ յայտնել » :

Կիւրակէ օր դարձեալ Չէչմէի մէջ բուռն երկրաշարժ մը պատահեր է :

Սթամպուլ կըսէ թէ Մէհմէտ Րիշտի փաշայ Չմիւնիայէն Պօլիս պիտի բերուի այս շաբաթ :

Հազըթաթ կըսէ թէ ստոյգ տեղեկութեանց համեմատ Գիւրտ Իսմայիլ փաշա Գիւրտիսթանի բարեկարգութեան արտաքոյ կարգի պաշտօնեայ կարգուելով, Հէքեարի մէջ բանակատեղի մը պիտի հաստատէ և պաշտօն պիտի ունենայ նաև Եէյս Ուպէյտուլլահը Պարսից դէմ պատերազմելէ արդելու :

ՂԱՂԱՅԻՆՑ ՊՈՐՄԱ

Table with 2 columns: Name and Price. Includes items like Գում. Գոնսոյիտ Գոցուեցաւ երէկ իրիկուն 18-25, Բացուեցաւ այս առաւօտ 18-35, ԲնթԱՅԳ ԱՐԺԷԹՂԹՈՑ, Սօսիէթէ մէնէրալ Անգղ. 1/ր. 5-14, Գիւրտի Ժէնէրալ 3-36, Գիւրտի Ժէնէրալ 10-25, Գիւրտի Ժէնէրալ 6-4, Գիւրտի 1863 (Մուլթոն) 88, Գիւրտի 1865 (Մուլթոն) 87-20, Գիւրտի 1869 (Բինար) 28, Գիւրտի 1872 (Պոն տիւ թրէզօր) 84-20, Գիւրտի 1873 (Բինար) 3-67 1/2, Թրամիլայ Օսմ. 1/ր. 1180, Թրամիլայ երկաթուղի Փրանք. 60-1/4, Լաւրիում 123-

ԲՆԹԱՅԳ ԳՐԱՄՈՑ

Table with 2 columns: Name and Price. Includes items like Գարպօն արծա. 92-108, Մէհիտի 108-2, Վեցնոց 128-15, Հինգնոց 213, Մէթալիք 206-30

ԱՐՏԱՔԻՆ

Ամերիկայի Միացեալ-Նահանգաց գաղթականութեան վիճակագրութեան մը կը տեղեկանանք թէ այս տարի գաղթականաց թիւը կէս միլիոնի հասեր է : Անցեալ տարի ընդամենը 327 հազար գաղթականք կային, որոց 104 հազարը գերմանացի, 66 հազարը իրլանտացի, 34 հազարը անգլիացի և 35 հազարը շուէտցի էին : Իսկ այս տարուան վիճակագիրը կը ցուցնէ թէ իրլանտացիք քիչցեր, սակայն գերմանացիք շատցեր են : Անցեալ տարի մինչև մայիս 23 հազար գերմանացի, 17 հազար իրլանտացի, 11 հազար անգլիացի, 9 հազար շուէտացի կը գտնուէին :

Իսկ այս տարի մինչև մայիս, 33 հազար գերմանացի, 11 հազար իրլանտացի, 10 հազար անգլիացի և 4000 շուէտացի բնակչութիւն հաստատած են յԱմերիկա, այսինքն ընդամենը 409 հազար հոգի : Իրլանտացիներէն շատեր դէպի արևմուտք կերթան երկրագործութեան պարագելու համար : Գաղթականաց մէջ ծերերը քիչ են . ընդհանրապէս եկողները 40 տարեկանէն վրայ են : Աւելի գերմանացիք և շուէտացիք դրամ կը տանին հետերնին, Բանի մը գերմանացիք 500-2000 տողար ունին :

Թակալաթ լրագիրը կը գրէ թէ Ռուսիոյ կոստանդին կոստանդինովիչ մեծ դուքսը Տիւնապուրի բերդը տարուեր է կայսերական հրամանաւ մշտնջենաւորապէս հոն մնալու համար :

Քինուլթիւնը հաստատեր է թէ դուքսը Ոչնչականութեան ծաւալման աշխատ

տած, դադարնի գումարումներու ներկայ գտնուած ժանտարմայի հին գնդապետի մը հետ և փոխառութեան անուամբ յեղափոխական տոնախօսութիւններ ըրեր է: Իւր կինը որ Օրէնպուրկի քահանայի մը աղջիկն է, և որուն հետ դուքսը ամուսնացած է հակառակ Աղէքսանդրը Բ. ի կամաց, իւր ամուսնոյն հետ երթալու հրաման ընդունել է:

— Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնեայն օտար տէրութեանց քով գտնուած Գաղղիական դեսպանաց չըջաբերական մը զրկելով կըսէ թէ Գաղղիացիք 1847 ին թուականի մէջ հաստատեցին թղթատարութիւն, 1859 ին հեռագրութիւն, և 1877-78 ին շինեցին իբր 130 մղոն երկայնութեամբ երկաթուղի: Գաղղիացիք հիմա կը շինեն 60 մղոն երկայնութեամբ ուրիշ երկաթուղի մը հիւսիսէն թունուզ և Պիզերթա քաղաքաց մէջտեղ, և ուրիշ երկաթուղի մը հարաւէն թունուզ և Սուսա քաղաքաց մէջտեղ: Գաղղիացիք նորոգած են Հռոմէական ջրմուղ մը մաքուր ջուր բերելու համար ի թունուզ և մօտերս պիտի շինեն լաւ նաւահանգիստ մը թունուզի համար: Երբ բարեկամական յարաբերութիւնք հաստատուին, Գաղղիացիք պիտի ձեռնարկեն շատ մը հանրագումար շինութեանց, զոր օրինակ փարոսներ հաստատելու, և բազմամարդ քաղաքներու մէջ ճամբայներ շինելու, երկիրը ուղղելու համար միջոցներ պատրաստելու, հանքերը բանեցնելու և երկրագործութիւնը ծաղկեցնելու:

— Փէթրպուրկի սատիկանութիւնը ուրիշ անձ մը ձերբակալած է որ կամբաստանուի իբրև մեղսակից Աղէքսանդր Բ. կայսեր սպանման: Այս անձն է ծովային պաշտօնակալ մը, որ մինչև ցարդ բնաւ կասկած եղած չէր անոր վրայ, բայց հիմա հասկցուած է թէ կառավարութեան ամբարներէն տինամիդ և ուրիշ պայթուցիկ նիւթեր դուրս հանած է, և մասնակից եղած է կայսեր կենաց դէմ գործուած այլ և այլ դաւերու: Գըրօնչատի մէջ երկու նաւային պաշտօնակալներ ձերբակալուած են, և ամբաստանութիւն կըլլայ անոնց համար թէ պայթուցիկ նիւթեր մատակարարած են Ռչնչականաց:

— Աթէնքի Մեթի լրագիրը հետեւեալ լուրերը կը հրատարակէ.

« Կ. Պօլսէն կը գրեն մեզ թէ կայսերական կառավարութիւնը՝ կիպրոսի բընակչաց ի նպաստ Հելլենական տէրութեան ըրած ցոյցերուն վրայ սրտնեղելով, դիտողութիւն ըրեր է Լոնտոնայի կառավարութեան որ յունիս և ի դաշնագրին հակառակ ծրագրի մը գործադրութիւնն արգելէ. անդղիական կառավարութեան կողմանէ Լորտ կրանվիլ վատահեցուցեր է զի. Դուռը որ այս խնդրոյն համար հարկ եղածը պիտի տնօրինէ:

Թէքէի սնտուկէն գողցուած ստակը 800 հազար ֆրանքէն տուելի կը հանեն:

Կորնթոսի ծովածոցին բերանը ծովառումը սկսաւ գրուել:

Լամիայէն կը գրեն թէ Թեսաղիոյ մէջ խռովութիւն յարուցանելու կասկածանօք խել մը մարդիկ ձերբակալուեցան:

— Պէրլինէն և Ս. Փէթրպուրկէն հասած տեղեկութիւնք կը ծանուցանեն թէ վեհապետաց դէմ եղած սպանութեան փորձերը պատժելու համար դուրսուելիք դեսպանաժողովը ետ մնացեր է, նկատելով որ Անգղիա, Գաղղիա և Իտալիա չեն ուզեր այս դադարարին համակերպիլ:

— Գերմանական թերթերը շարունակ կը գրեն թէ Պիզմարք իշխանը կառավարութեան աթոռը Պէրլինէն ուրիշ տեղ փոխադրել կուզէ: Կաղէթ Նասիօնալ կըսէ թէ Փօթստամի բնակիչները կը փափաքեն որ այս նախապատուութիւնը իրենց քաղաքին տրուի: Սակայն ճշմարտը սա է թէ խորհրդարանը Պէրլինի մէջ իրեն համար նոր պալատ մը շինելու ծրագիր մ'ընդունած լինելով, Պիզմարք իշխանը կը ջանայ որ սոյն ծրագիրը ետ առնուի:

Ա Ձ Դ

Առ երեսփոխանական ընտրողս թօր-Գարուի

Քաղիս երեսփոխան Յովհաննէս էֆ. Մարգարեան Գ. վիճակաւ դադարեալ ըլլալով, ըստ հրամանաց Ս. Պատրիարք Հօր մի այլ երեսփոխան ընտրելու համար երեսփոխանական ընտրողական ժողով մը կազմուած է, որ ի դիւրութիւն ընտրողաց՝ հետեւեալ եռապատիկ ցանկը պատրաստած է.

- Մեծ. Տօթթէօր Վիչէն Օրմանեան
 - » » Հիւնքեարպէյէնտեան
 - » » Յարութիւն Ռիւքեքն.
- Երեսփ. Ընտրողական ժողովս սոյն ընտրելեաց ցանկին հետ մէկտեղ պատրաստած է նաև ընտրողաց ցանկ մ'ալ, որ իւր հրահանգով հանգերձ թաղիս Ս. Եկեղեցւոյ բակն կախած լլլալով, հրաւէր կը կարգայ բոլոր Մեծ. ընտրողաց, որ յառաջիկայ կիրակի մայիս 17 իւրեանց ամենահարեւոր մի պարտականութիւնն ըստ հրահանգի կատարել բարեհաճին:

Մնամ աղօթարար

Նախագահ Երեսփ. Ընտր. Ժողովոյ Վարդան Լարսաբեթ Մոսկովեան 10 մայիս 1881 թօր-Գարու

Ի Լ Ա Ն

ՏԵՂԱՍԼԻԷ ՄԷՐԲԷՉԻ

Տէրիսատակէթտէ Պահճէ-դարուսունտա Շէյխ Իսլամ խանըն իւստ գաթընտա Տէլլալիէ մէրքեզի քիւշատ օլունուպ պու սայետէ արսա վէ խանէ վէ չիֆլիկ կիպի էմվալը ալլպ սաթանլար իշին սուհուլէթ օլաճաղը տէրքեար տըր. շէօյլէքի իշթիրաեա թալիպ օլանլար մահալը մէքքիւրէ միւրաճաաթ իթտիքլէրինտէ ֆիրուլթ իտէնլէրին միւշթէրլի արամաք միւշքիւլաթընտան խէլաս օլաճաղ.

լարը վէ ֆիրուլթ վէ իշթիրա իտէճէք զէվաթ իլէ Տէլլալէր մահալը մէքքիւրէ թէշրիֆ իթտիքլէրինտէ հէր վէճհ իլէ սուհուլէթ պուլուպ մէմուն օլաճաղալը իլան օլունուր:

Մ. Ս. Թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

(Արծար մեծիս 20 դարուոյ)

Արուեստ Երկայնակեցութեան	10	ՂԻ
Հոշակաւոր Ոճիրք. — ՊրէնվիլիէՄարքիպուհին Պատկերազարդ	7	»
Տնական Բժիշկ	6	»
Պտոյտ մը Պօլսոյ թաղերու մէջ	12	»
Հոշակաւոր Ոճիրք. — Սէն-Ճէրան Կոմսուհին Պատկերազարդ	6	»
Գասաղիրք Ազգային Պատմութեան Զ. տպագրութիւն Ս. Պ. Պ. փափագեանց	5 1/2	»
Գասաղիրք Ընթացանութեան Պատկերազարդ Ե. տպագրութիւն Ս. Պ. Պ. փափագեանց	2 1/2	»

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՆԵՆԻՃԷՄՍԱԽՈՏԻ ՊՕՆԹԻ ԵՂԱՐԱՐ ԵՒ ՇԱՀԻՆԻ 109 Ղալաթա. Սանտրգճըլար փողոց 109

Ստորագրեալքս անեւտրական բոլոր պատասխանատուութիւնը մեր վրայ առնելով Գօնթի եղբարց և Շահինի հետ ընկերութեամբ Ղալաթիոյ Սանտրգճըլար փողոց թիւ 130 գործատունն հաստատելուս ի վեր արժանապէս քաջակրօնեցանք պատուարժան յաճախորդաց բազմութեանն: Ամէն ոք յա զնահատեց մեր գործարանին կամ ծխախոտոյն ընտրութիւնը, ճաշակը և գիներուն չափաւորութիւնը տեսակներուն համեմատութեամբ. ուստի և մեզ հարկ եղաւ, աւելի ընդարձակ ասպարէզ մը տալ մեր գործատուութեանց:

Եւ նախ մեր գործարանն ու վաճառատունը փոխադրեցինք առաջնոյն զիմացը 109 թիւ շէնքին մէջ, և իւր անհամեմատ ընդարձակութեամբը խիստ յարմարութիւն ունի թէ մայրաքաղաքէս թէ վաւաններէն և թէ օտար երկիրներէ եկած բազմաթիւ հըրամաններն յոյժ գոհացուցիչ կերպիւ և փութով կատարելու:

Կրկորդ ծխախոտոյ բերքն արտադրող ամեն կողմ և մանաւանդ յիսիճէ յատուկ գործակալներ կարգելով սկսած ենք մասնաւոր ինամօք պատրաստել տալ բերքը և ահա այս ինամօք և զոհողութեանց շնորհիւն է որ այսօր ամենընտիր և հոտաւէտ ծրխախոտներ կարող ենք մատակարարել նաեւ 150 նոց, 200 նոց, և 300 նոց և աւելի բարձր գիներով ըստ տեսակին:

Այսուհետև ոչ ոք պիտի վարանի իւր ճաշակին յարմար ընտիր ծխախոտ գտնելու մասին, բաւական է զիմել մեր վերոյիշեալ գործատուուն ի Ղալաթիա Սանտրգճըլար փողոց թիւ 109, և կամ ամեն ծխախոտաներէ խնդրել մեր գործարանէն ելած ասպրանքներէն:

Եւս. Օտար երկիրներէ ասպրանք ուղղողները կը մասնակցին այն մեղահարձին, զոր ունիմք կայսերական կառավարութիւնէն, որ է պանտրօլի տուլքէն ազատ ըլլալ, որով 1/0 ին 20 շահ կունենան:

Վաճառատուներն են.

Ղալաթիա Սանտրգճըլար	թիւ 109
Զընտան դարու Զէօմէկիճիլը	» 29
Եմին-Էօնիւ	» 36

ՏԵՄԻՐԳԱՓՈՒԼԵԱՆ ԵՂԱՐԱՐ

ՏԵՐ-ԽՄԲԱԳԻՐ Մ. Յ ՄԵՆԻՔԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ. Բիգա փաշա խան քիւ 3